ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Ն. Ասատրյան

«15» սեպտեմբերի 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Լոռու մարզի Վանաձոր քաղաքի

Ս. Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

## 3-րդ Բ դասարան

Սարդարյան Նարինե Սամվելի

«2022-2023» ուսումնական տարի

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. <u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը):</u>

III Բ դասարանում սովորում է 29 աշակերտ՝ 14 աղջիկ, 15 տղա: Դասարանում կա մեկ ներառված աշակերտուհի՝ Էվելինա Չախալյանը: Բոլորը ապահոված են դասագրքերով: Դասարանում տիրում է առողջ և համերաշխ մթնոլորտ: Երեխաները համախմբված են, կա փոխադարձ հարգանք: Դասարանում կան աշխույժ, լավ սովորող երեխաներ, որոնք միշտ պատրաստ են դասերին:

2. <u>ՈՒսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում</u>:

ՈՒսումնադաստիարակչական նպատակով հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հաճախակի ծնողական ժողովներ, քննարկել երեխաների խնդիրները: Դասերից և վարքից թերացող երեխաների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկվեն նշված թերությունները:

Դասղեկի ժամերին կքննարկվեն տարբեր բնույթի հարցեր, կզրուցենք երեխաներին հետաքրքրող թեմաների շուրջ:

Հետևողական աշխատանք տանել դասարանում եղած գույքի պահպանման ուղղությամբ, հոգատար վերաբերմունք ձևավորել գրքի նկատմամբ:

## 3. <u>ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u>

### <u>3.1 Հոգևոր դաստիարակություն</u>:

Ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է գիտակցի սեփական մշակույթի, այդ թվում նաև կրոնի կարևորությունն ու նշանակությունը: Կազմակերպել հանդիպումներ քահանայի հետ, ով առավել մանրամասն կբացատրի կրոնի նշանակությունը և կարևորությունը:

### <u>*3.2* Գեղագիտական դաստիարակություն</u>

Գեղագիտական դաստիարակությունը երեխաների զգացմունքների, գիտակցության, վարքի և գործունեության որոշակի աստիճանի հասնելն է, որի արդյունքում նա պետք է կյանքում, բնության մեջ, մարդկային հարաբերություններում գեղեցիկի և տգեղի, լավի և վատի վերհանում կատարի:

### <u>3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն</u>

Բազմակողմանի աշխատանքների միջոցով երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի նկատմամբ:

Կարևորել հայոց բանակի և զինվորի դերը մեր յուրաքանչյուրի կյանքում: Ճանաչել մեր հերոսներին և նրանց կատարած քաջագործություններին:

*3.4 ֆիզիկական դաստիարակություն:* Ձևավորել խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի՝ մարմնի կեցվածքի նկատմամբ: Բացատրել և կարևորել հետևել ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինը վարժությունների հնարների միջոցով: հետևեն օրվա ռեժիմին և իմանալ առողջ ապրելակերպի կանոնները:

**<u>3.5 Աշխատանքային դաստիարակություն</u>**

Աշակերտների մեջ սեր և եռանդ սերմանել աշխատանքի նկատմամբ: Մասնակցել դպրոցական շաբաթօրյակներին: Արժևորել աշխատանքով ստեղծվածը: սովորեցնել գնահատել սեփական և այլոց աշխատանքը:

**<u>3.6 Բնապահպանական դաստիարակություն</u>**

Երեխաներին բացատրել մեզ շրջապատող բնության դերն ու նշանակությունը անձի կյանքում, որը կմղի նրանց բնության պահպանմանը: Կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները:

**<u>3.7 Դպրոց ընտանիք կապը</u>**

Երեխայի դաստիարակության գործընթացում շատ կարևոր է դպրոց-ընտանիք կապը: Հաճախակի զրուցել ծնողների հետ երեխաների վարքի մասին, հետևել որ երեխաները դպրոց հաճախեն պատրաստ: Ծնողներին ընդգրկել դասարանական և համադպրոցական աշխատանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | կատարողներ |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | Գիտելիքի օր | 01.09.2022թ | |
| | Դասագրքերի բաշխում | 01.09.2022թ | |
| | Ծնողական ժողով | 02.09.2022թ | |
| | Ընտրել կարգախոս Հայաստանի անկախությանը նվիրված «Ապրենք խաղաղ, լինենք անկախ» | | |
| Հոկտեմբեր | «Ոսկեծամիկ աշունը՝ մեզ հյուր» էքսկուրսիա այգի բնության երևույթները դիտելու և հասկանալու նպատակով: | | |
| | Պաստառի պատրաստում՝ «Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները» | | |
| | Այցելություն մանկական գրադարան | | |
| Նոյեմբեր | «Բարության ծառ» պաստառի պատրաստում, որտեղ յուրաքանչյուր պտուղ կներկայացնի երեխաների կատարած բարի գործերը: | | |
| | Այցելություն «Պլանետարիում», բացահայտելու տիեզերական գաղտնիքները; | | |
| Դեկտեմբեր | Ապլիկացիոն աշխատանքների միջոցով ներկայացնեն ձմեռը:<br>Տեսաֆիլմի դիտում՝ «Ինչպես պաշտպանվել երկրաշարժից» | | |
| | Դասասենյակի ձևավորում՝ Ամանորին ընդառաջ: | | |
| Հունվար | Բաց նամակի և նկարի տեսքով երեխաները | | |

| | | | |
|---|---|---|---|
| | արտահայտեն իրենվ պատկերացումները սահմանը հսկող զինվորների մասին: | | |
| Փետրվար | Դիտել մուլտֆիլմեր և ընթերցել Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններից և քննարկել: | | |
| | «Մայրենիի օր»: Խոսոնք հայրեն | | |
| Մարտ | Զարդարել դասասենյակը՝ գարնան շնչով: | | |
| | Մայրության և գեղեցկության տոնին նվիրված բացիկների և ծաղիկների պատրաստում: | | |
| Ապրիլ | Ներկայացնել «Սուրբ Զատիկ» տոնի խորհուրդն ու նշանակությունը: | | |
| | «Պահպանել բնությունը» խորագրով խնամել դպրոցամերձ  հողամասի ծառերը և ծաղիկները: | | |
| | Այցելել եկեղեցի, հանդիպում քահանայի հետ, մանրամասն իմանալ կրոնի նշանակությունը և կարևորությունը: | | |
| Մայիս | Դիտել տեսաֆիլմ ճանապարհային նշանների և տրանսպորտային միջոցների մասին: | | |
| | Գործնականում կիրառել երթևեկության կանոնները: | | |
| | Ներկայացնել տեղեկություններ մայիսյան հերոսամարտերի մասին, կարևորելով հայրենիքի դերն ու նշանակությունը: | | |

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը | ծանոթություն |
|---|---|---|
| | Գիտելիքի օր: Կազմակերպական հարցեր | |
| | Առողջ ապրելակերպ: Հիգիենայի կանոններ | |
| | Ապրե՛նք խաղաղ, լինե՛նք անկախ | |
| | Ճանապարհային երթևեկության կանոնները | |
| | «Իմ ծննդավայրը՝ իմ գեղատեսիլ Վանաձոր» | |
| | «Տոնդ շնորհավոր սիրելի՛ ուսուցիչ» | |
| | Սուր կենցաղային իրադրությունները և դրանց ազդեցությունները | |
| | Մեր դպրոցի ճանապարհը և նոր երթուղիները | |
| | Աշակերտների իրավունքները և պարտականությունները | |
| | Բարության օր | |
| | Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում | |
| | Բարեկամությունը սկսվում է ժպիտից | |
| | Ճերմակ ձմեռ | |
| | Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում | |
| | Երկրաշարժի ժամանակ անվտանգության կանոնները | |
| | «Ուրախ տոնածառ», ինչպես են նշում ամանորը տարբեր երկրներում | |

| | | |
|---|---|---|
| | Սուր կենցաղային իրադրությունները և դրանց ազդեցությունը | |
| | Աշակերտների տարրական գործող կենցաղային վտանգավոր իրադրություններում | |
| | Ես զինվորն եմ իմ հայրենիքի | |
| | Վարորդի աշխատանքը | |
| | Խաչմերուկները և դրանց տեսակները: Ճանապարհային գծանշումներ | |
| | Հովհաննես Թումանյանի հեքիաթների ընթերցում, քննարկում: Գիրք նվիրելու օր | |
| | Մայրենիի օր: Խոսենք հայերեն | |
| | «Գարունն ասաց՝ եկա» | |
| | «Գարունը մայրիկիս է նման» | |
| | Ինքնօգնության և փոխօգնության տարրեր կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում | |
| | Փողոցները և ճանապարհները անցնելու կանոնները | |
| | «Սուրբ Զատիկ» տոնի խորհրդանիշն ու նշանակությունը | |
| | Արտակարգ իրավիճակների մասին ազդարարումը և բնակչության գործողությունների հաջորդականությունը | |
| | «Հայոց Մեծ Եղեռն» հիշատակի օր | |
| | Տրանսպորտային միջոցների տեսակները | |
| | Ճանապարհային նշանները և դրանց խմբերը | |
| | Տրանսպորտային միջոցների արգելակման ճանապարհը | |
| | Սեղանի խաղեր երթևեկության կանոնների վերաբերյալ | |
| | Մայիսյան հերոսամարտերը | |